

ԼՈՒՄԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ դասախոս, բանասիրական
գիտությունների թեկնածու

lkhachatryan@ysu.am

ՀՏԴ 821.19-92:070

ՊԱՍՖԼԵՏԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԸՎԱՃՅԱՆԻ «ՄԵՂՈՒ» ՀԱՆՐԵՍՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. պամֆլետ, ֆելիետոն, հրապարակախոսություն, «Մեղու», երգիծանք, բանավեճ, Հարություն Սըվաճյան, Միքայել Նալբանդյան, Հովհաննես Տերոյենց, Խորեն Գալֆայան:

Ключевые слова и выражения: памфлет, фельетон, публицистика, «Мегу», сатира, диспут, Арутюн Свачян, Микаел Налбандян, Ованес Тероенц, Хорен Галфаян.

Key words and expressions: pamphlet, feuilleton, journalism, 'The Bee', satire, dispute, Harutyun Svachian, Mikael Nalbandyan, Hovhannes Teroyents, Khoren Galfayan.

Ակնարկային գրականության ժանրային համապատկերում (ակնարկ, հուշագրություն, ֆելիետոն...) հրապարակախոսական ընդգծված շնչով ու պաթոսով, քաղաքացիական կորովով հատկապես առանձնանում է պամֆլետը: Այս ժանրի հիմնական տարերքը մերկացման ու ոչնչացման հզոր ուժն է, որը սովորաբար ուղղվում է հետաշարժության ու տգիտության, հանրային-քաղաքական զանազան կարգերի և դրանցից բխող՝ առանձին անձերի դեմ: Պամֆլետի «անձնական բնույթի» հատկանիշն էլ նրան էականորեն տարբերակում է ֆելիետոնից, որն առավելապես ծաղրում է առանձին փաստեր ու երևույթներ և չի հետապնդում հանրային-քաղաքական կյանքի մերկացման լայն խնդիրներ: Այլ կերպ ասած՝ պամֆլետը երգիծական տարրերով հագեցած մերկացնող ստեղծագործություն է՝ ուղղված հասարակական ամբողջ կառույցի դեմ:

Հայ գրականության մեջ պամֆլետի նախօրինակները կարելի է գտնել դեռևս 5-րդ դարում՝ գրավոր գրականության սկզբնավորման հետ միասին: Հիշենք, օրինակ, Ղազար Փարպեցու նշանավոր «Թուղթը...»՝ Վաղարշապատի ստախոս աբեղաների կեղծ ամբաստանությունների դեմ ուղղված մեղադրական խոսքը, որն իր մերկացման ուժի շնորհիվ հետագայում այնքան է հետաքրքրել Միքայել Նալբանդյանին, որ նա այն վերածել է աշխարհաբարի: Ի դեպ, մեր գրականության մեջ պամֆլետի առաջին դասական օրինակները տալիս է հենց Միք. Նալբանդյանը. դրա պերճախոս վկայությունն է նրա «Երկու տող» պամֆլետը:

Այս նշանավոր մտածողի հետ միասին ու միաժամանակ հայ հրապարակագրությունը հարստացնում էր նաև մի ուրիշ երևելի գործիչ՝ **Հարություն Սըվաճյանը** (1831-1874), որի խմբագրությամբ ու տնօրինությամբ լույս ընծայվող «Մեղու» հանդեսը պատկառելի դեր է կատարել 19-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության, հասարակական մտքի ու ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ: Միք. Նալբանդյանը 1864-ին գրած «Ազգային թշվառություն» հոդվածում բարձր է գնահատել «Մեղուն»՝ այն համարելով «երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը»¹, իսկ «Ուղերձ առ Մեչուխեչան Կոստանդնուպոլիս» բանաստեղծության մեջ վեր է հանել Հ. Սըվաճյանի քաղաքական խիզախ դեմքն ու վաստակի էությունը: Բնույթով լինելով «հավաքածո՝ բարոյական, բանասիրական, գրագիտական, տնտեսական, առևտրական և զվարճալի գիտելյաց» հանդես՝ «Մեղուն» նշանակելիորեն կազմակերպել է 1850-1860-ականների գրական շարժումն ու գեղարվեստական ճաշակը: Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից ուշագրավն այն է, որ Հ. Սըվաճյանի երգիծանքում հրապարակախոսությունն ու գեղարվեստը հանդես են գալիս միահյուսված:

«Մեղու»-ի էջերում Հ. Սըվաճյանի ստեղծած երեք պամֆլետները՝ «Մեծ Քիթ մը», «Պ. Զամուռճին աշխարհքես վերնա նե՝ տեղը ո՞վ դնենք» և «Խորեն եպիսկոպոս»², անշուշտ, հրապարակագրական են՝ հենված իրական փաստերի ու դեմքերի գործունեության վրա, բայց և այնպես դրանք օժտված են նաև գեղարվեստական որոշակի ընդհանրացումներով: Եթե Միք. Նալբանդյանի մոտ պամֆլետը հիմնականում աչքի է ընկնում իր բանավիճային բնույթով, ապա Հ. Սըվաճյանի պամֆլետներում վավերականը հաճախ ստանում է գեղարվեստական հանդերձանք, այսինքն՝ «հրապարակախոսական պամֆլետը» ներհյուսվում է «գեղարվեստական պամֆլետի» տարրերին: Գրական ժանրերի տեսաբան Հասմիկ Մարգունին իրավացիորեն նկատել է, որ «պամֆլետի ու նրան «ազգակից» երգիծական մյուս ժանրերի միջև որոշակի սահման չկա: Սա բացատրվում է ժանրի իրոք սինթետիկ բնույթով, որ օգտվում է ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական և նույնիսկ հոետորական միջոցներից: Զե՞ որ պամֆլետում շատ կարևոր է ապացույցների բնույթը՝ մեղադրանքների անառարկելի, տրամաբանական, համոզիչ լինելը:

¹ Նալբանդյան Միք., Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 4, Եր., 1983, էջ 293:

² Տե՛ս «Մեղու», հանդես, Կ. Պոլիս, 1862, թիվ 154, 28 փետրվարի, էջ 47, թիվ 157, 31 մարտի, էջ 69-71, 1872, թիվ 87, 3 հունիսի:

Սակայն բոլոր այս միջոցները, ինչպես և խոսքի պաթետիկությունը, լեզվի սրությունը, փաստերի, թվերի, փաստաթղթերի օգտագործումը գեղարվեստական պամֆլետում ծառայում են երգիծական պատկերավորությանը»³:

Հ. Սըվաճյանի պամֆլետներում որոշակիորեն առանձնանում է մի էական հատկանիշ՝ սեղմության մեջ վավերական գործչի բնավորության ու գործունեության ամենաէական հատկանիշների վերհանումն ու խարազանումը: Ահա, օրինակ, տիպահոչակ Հովհաննես Տերոյենցը՝ նույն ինքը՝ Տեր-Կարապետյան-Չամուռճյան-Պրուսացի բազմանուն Պատվելին, որը, ինչպես վկայում է կենսագիրը, «տիրած էր 10-15 լեզուներու, լափած էր հազարներով գիրք, գրած էր հարյուրներով ալ. կը մաքառեր ու կը հաղթեր հռոմեական ու բողոքական աստվածաբաններու և հրեա ռաբբիներու. ուներ նաև սոսկալի՝ բան՝ դներու գիտությունը, վարժապետած էր կաթողիկոսներու և, խայթիչ գրողի մը (Հ. Սըվաճյանի – Լ. Խ.) խոսքով, ինք անվեղար կաթողիկոսն իսկ էր ազգին...»⁴: Չափազանց կրթված, բայց, ցավոք, կրոնական մոլեռանդությամբ վարակված այդ հետադեմ մտածողը հաջորդաբար հրատարակած իր պարբերականներում՝ «Հայաստան» (1846-48, 1850-52), «Զոհալ» (1855-56), «Երևակ» (1857-66), մի առանձին եռանդով պաշտպանում էր կալվածատիրության շահերը, պայքարում էր 1860-ականների Զարթոնքի սերնդի դեմ: Բազմաթիվ են հատկապես «Երևակի» էջերում տպագրված այն հոդվածները, որոնց մեջ հեղինակիսմբազիրը պատմում է զանազան դների գոյության, նրանց չարության մասին: Կ. Պոլիս ժամանած Միք. Նալբանդյանի ուշադրությունից, անշուշտ, չէր կարող վրիպել պոլսահայ ամիրաների ու հետադեմ հոգևորականության այդ գաղափարախոսը, և նա Տերոյենց-Չամուռճյանի դեմ սկսում է հայտնի բանավեճը՝ նախ «Հրաշափառ խայտառակություն» պամֆլետով, ապա շարունակում նշանավոր «Երկու տողում»: «Որպես հայ, ամոթահար զայրանում ենք, որ այս ժամանակում հայ մամուլից արձակվում են այսպիսի ցնորաբանությունք,- գրում է Միք. Նալբանդյանը:- Մինչև ե՞րբ պիտի խայտառակվին և յուրյանց հետ պիտի խայտառակեն հայ մամուլը, մեր այս դերնկալ իմաստունքը. կարծենք թե ժամանակ էր արդեն սթափելու միջին դարերի արբեցուրենից»⁵:

³ Մարգունի Հ., Ակնարկային գրականության ժանրերը, «Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Երևան, 1973, էջ 457:

⁴ Մրմրյան Հ. Գ., Տասնևիններորդ դար և Հովհ. Պրուսացի Տերոյենց, Կ. Պոլիս, 1908, էջ 14:

⁵ Նալբանդյան Միք., Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 3, Եր., 1982, էջ 265:

Հ. Սըվաճյանը ևս նախանշանական դիրքերից հետևողական պայքար է ծավալում Տերոյենցի դեմ: Ահա «Մեծ ՔրԹ մը» պամֆլետը: «Երևակի» 1862 թ. 116-117-րդ համարներում Չամուռճյանը «մեղվականների» և ընդհանրապես «լուսավորյալների» դեմ տպագրել էր մի քանի հոդվածներ՝ փորձելով «լուսավորյալներուն միսը ուտել»: Հ. Սըվաճյանը, օգտագործելով Չամուռճյանի՝ «լուսավորյալները քիթերնին իրենց չըհասկըցած բանին մեջ կը խոթեն, և տարապարտ վեճեր և կոիվներ կը բանան» արտահայտությունը, իր գլխավոր նշանակետն է դարձնում Պատվելու **քիթը**: «Երևակի» խմբագրի դեմքն այլանդակվել է «Մեղու»-ի թունավոր խայթոցներից. «Պ. Չամուռճիին քիթը մեծցեր էր, վասնզի մեղու մը անցած տարի անոր վրա նստավ, կճեց, շուտ մը քիթը ուռեցավ, քիչ ատենի մեջ ահագին մեծություն մը ստացավ և այս այլանդակ ուռեցքը տեսնողները չըկրցին ծիծաղնին բռնել, հարկ եղավ Պարոնին կիսատ ձգել իր հրապարակախոսությունը և քթին դեղ ընել... ուստի պարտավորեցավ զայն տղմին մեջ ընկղմել»⁶:

Հաջորդ՝ «Պ. Չամուռճին աշխարհքես վերնա նե՝ տեղը ո՞վ դնենք» պամֆլետը հեղինակն սկսում է թվացյալ մտահոգությամբ ի՞նչ կլինի, օրինակ, եթե «պ. Չամուռճին աշխարհքես վերնա», ո՞վ կարող է փոխարինել նրան: «Ասիկա խիստ կարևոր խնդիր մըն է որ այժմեն շատերուն ուշադրությունը կը գրավե»⁷, - հեզնանքով շարունակում է Հ. Սըվաճյանը: Այնուհետև ևս շարունակվում են հեղինակային կեղծ մտահոգություն-անհանգստությունները. չէ՞ որ Պատվելին «չորս միլիոն ազգին *եզական* մարդն է», շատերն են անհանգստանում, որ վշտի մեջ կշփոթվեն և իրենց անելիքը կմոռանան. «Պ. Տեր Կարապետյանը, Աստված տա երկար ապրի, բայց որովհետև մահկանացու է, ինչպես ինք ալ կը հավատա, օր մը պիտի մեռնի հարկավ և աշխարհքես վերնա. վասնզի արդեն բավական տարիքն առած է, ինչպես կըսեն. ուստի երբ Աստուծո անդառնալի վճիռը իր վրա կատարվի՝ չորս միլիոն ազգին այս *եզական* մարդը ո՞հ պիտի կորսըվի: Անոր համար քանի որ հիշյալ Պարոնը դեռ կենդանի է, կապրի, շատերը իրեն համար այսօրվրեն կը մտածեն. վասնզի անոր հրաժարման իրենց ազդելիք մեծ ցավը այժմեն զգալով՝ կը վախնան որ ցավի ու կսկիծի մեջ չըկրնան հայնժամ ըստ արժանվույն մտածել անոր վրա ու անհոգ կենան»:

Պամֆլետի սկզբնամասի սեղմ, բայց ոչնչացնող բնութագրումներն այնուհետև վերածվում են հեղինակի խոստացած որոշ վավերական

⁶ «Մեղու», 1862, թիվ 154, 28 փետրվարի, էջ 47:

⁷ Նույն տեղում, թիվ 157, 31 մարտի, էջ 69:

մերկացումների ու վիճաբանական բացահայտումների, որոնք ամբողջացնում են երգիծական կերպարը: Դիտելի է, որ այդ հաստատվածներում ևս հրապարակագրական ոճը հիմնականում ստվերվում է երգիծական պատկերավորության ու գեղարվեստական կառույցի նետած լույսից: Եվ ահա պամֆլետի վերջում հնչում է սկզբնամասի «անհանգստացնող» հարցը՝ ի՞նչ կլինի, եթե պ. Չամուռճին աշխարհի երեսից վերանա: Հաջորդում է սրամիտ պատասխան-եզրահանգումը. ոչինչ էլ չի պատահի. պարզապես պետք է նրան մեծապես զեղչել, տեղը բաց թողնել. «Ուրեմն դժար, նամանավանդ անկարելի է մեզի հիմա որ անի աշխարհես վերնալեն ետքը անոր տեղը մեկը դնել մտածենք կամ մեկը կարենամք գտնալ անոր տեղը անցնելու. ասոնք անկարելի բաներ են, ուրեմն ավելորդ է ասոր վրա միտք հոգնեցնելու, ուստի բաց կը թողունք անոր տեղը և վերին Նախախնամությանը կը հանձնենք որ անոր տխուր հիշատակները մեր մտքեն բոլորովին ջնջե և մեր ազգին մեջ անոր տեղը բռնելու մարդ չըհարուցանե վասն զի ասի անգամ Էվել կուգա կոր»⁸:

Հ. Սըվաճյանը լուրջ տարաձայնություններ է ունեցել նաև արևմտահայ մի ուրիշ նշանավոր գործչի՝ Խորեն արքեպիսկոպոս Նար-Պեյի (Գալֆայան) հետ: «Մեղու»-ի էջերում տպագրված «Խորեն եպիսկոպոս» պամֆլետը նախորդների պես ևս ստեղծված է հեզնանքով. ամենուր զգալի է հեղինակի բացասական վերաբերմունքն անուղղելի փառասեր ու պաշտոնատենչ հոգևոր բարձրաստիճան գործչի նկատմամբ: Պամֆլետում հիշատակված վավերական փաստերն այստեղ արդեն վերաճում են պատկերերկիտություն: Հ. Սըվաճյանը հարազատ է մնում իր ոճին. սկզբնամասի արտաքին լրջության քողի տակ, թվում է, գովերգում է մի մարդու, որին «Աստված ղրկեց, որ մեր ազգին այսպիսի ընդհանուր անտարբերության միջոցին այսպիսի ահագին ալեկոծության մեջ ազգին նավը խաղաղության նավահանգիստը տանի մտցնե»⁹: Նար-Պեյը զանազան նամակներով երեսփոխաններին հրավիրել է Ազգային ժողով, որպեսզի «հոս Ազգային Քաղաքական ժողովի անդամոց թվույն և ընտրության եղանակին վրա եղած տարբեր կարծիքները միացրնե և սա ազգակործան խնդիրին վախճան մը տա»: Թվում է՝ ազնիվ է նպատակը, բայց շուտով հեզնական լրջության գովաբանական բնույթից բխում է անողորմ սատիրան. «մեկ քարով քառասուն ընկույզ թափել» ուզող հոգևորականը մտահոգված է ոչ թե ժողովրդի թշվառ վիճակով, այլ ազգի կողմից դափնեպսակների արժանանալու մոլուցքով.

⁸ Նույն տեղում, էջ 71:

⁹ «Մեղու», 1872, թ. 87, 3 հունիսի:

«Ուրեմն կեցցե Խորեն եպիսկոպոս – ծափ զարկեք թշվառականն՝ ր:
Չըտեսա՞ք որ Խորեն եպիսկոպոս գործին մեջ մտնելուն պես ի՛նչպես
շուտ մը լմնցավ գործը....

Հա՛ հա՛ հա՛ հա՛.....

Բայց ինչու՞ կը խնդաք, ի՞նչ կըլլա եղեր գործը չըլմննալով:

Խորեն եպիսկոպոսի ալ հոգն ա՛յն էր կը կարծեք որ գործը լմննա: Անի
ուրիշ փափաք և ուրիշ հասկնալիք ուներ. փափաքը այն էր որ ժողովուրդը
իմանա թե Խորեն եպիսկոպոսեն զատ ազգին մեջ, ազգին վրա մտածող
մարդ չըկա: Հասկնալիքն ալ այն էր թե քանի՛ երեսփոխան պիտի գտնըվին
արդյոք, որ իր հրավերին հնազանդելով, անսալով, պիտի գան իր շուրջը
նստին և զինքը իրենց Նախագահ պիտի ընտրեն»¹⁰: Պարզվում է, սակայն, որ
եպիսկոպոսի հրավերն ընդունել են սոսկ ընդամենը երեսփոխաններ, և
ՄեչուխեչաՍըվաճյանը Նար-Պեյին կարծես մխիթարելու համար ասում է,
որ «մյուս երեսփոխանները այն օրը մեռած էին, անոր համար չգացին. չէ նե
ն՞վ կը հանդգնի անոր հրավերը մերժելու»: Ո՛րն է այստեղ կոմիկականը.
այն, որ ազգային խնդիրներին ըստ էության անտարբեր փառասերը հայ-
րենասիրական ճառեր է արտասանում նրա համար, որ «Ժողովուրդին մեջ
իր վրայոք շատ խոսվի», իսկ այդ հանգամանքը նկատվում է շրջապատի
կողմից, և պայթում է ծիծաղը. «Խորեն եպիսկոպոս ելավ երեսփոխանները
հրավիրեց որ ժողովուրդը իր վրա խոսի. ժողովուրդը մինակ խնդաց:
Ընդհանուր Ժողովին մեջ խնդրույն վրա խոսելեն ետքը ելավ ազգին
ապագային վրա իր ունեցած իդձը, բաղձանքը, փափաքը, տենչանքը...

Մեչուխեչա.- անտարբերությունը....

Թշվառակա՛ն, լռե. հայտնեց. իրավամբ մարդը ծափահարություն մը
սպասեց:

Բերանները բսբսացին Բայց ձեռքերը չըխոսեցան»¹¹:

Ինչպես նկատելի է, «Մեղու»-ի էջերում Հ. Սըվաճյանի զետեղած
պամֆլետները ժամանակաշրջանի հասարակական պահանջների
թելադրանքով ստեղծված ուշագրավ նմուշներ էին, որոնք չէին կարող
անտեսել հաջորդ շրջանների գրող- հրապարակախոսները:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

Լ. Խաչատրյան

**Պամֆլետը Հարություն Սրվաճյանի «Մեղու» հանդեսում
Ամփոփում**

Հոդվածը նվիրված է հայ գրականության մեջ պամֆլետի առաջին դասական օրինակների քննությանը: Հիմնահարցի պարզաբանումն իրականացվել է Հարություն Սրվաճյանի «Մեղու» հանդեսում զետեղված երգիծական որոշ մանրապատումների և Միքայել Նալբանդյանի հրապարակախոսական բնորոշ երկերի զուգադիր վերլուծություններով: Մասնավորապես նկատվել է, որ դրանցում հաճախ իրական փաստերը փոխակերպվում են պատկեր-գաղափարի, պատկեր-գործող անձի, որոնք հարստացնում են հայտնի ժանրը՝ «հրապարակախոսական պամֆլետին» հաղորդելով «զեղարվեստական պամֆլետի» տարրեր:

Л. Хачатрян

**Памфлет в журнале «Мегу» Арутюна Свачяна
Резюме**

Статья посвящена анализу первых классических образцов памфлета в армянской литературе. Освещение проблемы было осуществлено на основе параллельного анализа некоторых сатирических миниатюр Арутюна Свачяна из журнала «Мегу» и характерных публицистических произведений Микаела Налбандяна. В частности, было выявлено, что в указанных произведениях реальные факты преобразованы в образы – идеи, образы – действующие лица, что обогащает известный жанр, привнося в «публицистический памфлет» элементы «художественного памфлета».

L. Khachatryan

**Pamphlet in Harutyun Svachian's Magazine 'Meghu' ('The Bee')
Summary**

The article is dedicated to the analysis of the first classic examples of pamphlet in Armenina literature. The clarification of the issue has been carried out by the comparative analysis of some satiric small short stories, that were published in the magazine by Harutyun Svachian 'The Bee' and of publicising works that are characteristic for Mikael Nalbandyan. It is particularly noted that here real facts are often transformed into image-idea, image-acting personage, which enrich the famous genre, i.e. 'journalistic pamphlet' and give it the elements of 'literary pamphlet'.